

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Կ. Պոլսի նախկին պատրիարք Սրբ. Մաղափա աբ. Օրմանեանի երկու նամակները պատրիարքական Տեղապահին:

ԲԵՐԱ Կ. ՊՈԼՍՈՅ, 10 ՍԵՊՏ. 1908

Ք. ԳԵՐ. Տ. Եղիշե Ս. Եպիսկոպոս Գուրեան, Տեղապահ
Պատրիարքութեան Կ, Պոլսոյ.

Ձեր կողմանէ ստացած պաշտօնագիրներէս մէկուն մէջ հետեւեալ պարբերութիւնը կպարունակուէր. «Խառն ժողովը հարկ դատած է որ Ձ. Ս. իր երկոտասանամեայ պաշտօնավարութեան և նախորդ Վարչութեան դործոց մասին ալ համարատուութեան տեղեկագիր մը պատրաստէ, որ պիտի ներկայցուի յառաջիկային դամարութիւնը Ընդհանուր ժողովին, և որուն մէջ պիտի երևի անշուշտ Ձեր հաշուական գործառնութեանց վերաբերեալ մասն ալ» Ձեր Սրբազնութեան պաշտօնագիրին այդ մասին դործադրութեան վրայ անդրադառնալով, հետեւեալ դիտողութիւնները Խառն ժողովին ուշադրութեան կներկայեմ, և բացատրութեանց կակնկալեմ: Պատրիարքարանի վարչական համարատուութիւնն ըստ Սահմանադրութեան Վարչական ժողովները կներկայեն, սրով յայտնի չէ թէ ինչ տեսակէտի ներքև ինչ կսպասուի այդ համարատուութիւնը: Նախորդ Վարչութեան դործոց համարատուութեան մասին, պէտք է որ անոր մնացեալ անդամները խօսին և իրենց միտքը յայտնեն:

Վերջին երկու տարիները ներկայ Վարչութեան պատկանելուն, արդեօք իր համարատուութիւնն ալ ինձի՞ կյանձնարարէ գրել: Եթէ կմտածուի որ Պատրիարքն ալ իրր Վարչութեան հետ պատասխանատու, համարատուութեան ալ պիտի մասնակցի, գոնէ պէտք է որ ժողով և նախագահ համաձայնութեամբ պատրաստեն իրենց համարատուութիւնը: Ամէն առթիւ մեզ համարատուութիւն պատրաստելու համար պէտք է բոլոր ատենադրութիւններն և հառած ու յղուած պաշտօնագիրները ձեռքի տակ ունենալ, և ասոնք իմ արամադրութեան ներքև դրուած չեն:

Հաշուական խնդիրներու անցնելով, թէպէտ Պատրիարքարանի հաշիւներուն պատասխանատուն Պատրիարքը չէ, այսու հանդերձ ժամանակին ընդարձակ տեղեկագիրներ պատրաստած եմ անցեալ տասը տարիներու համար, և վերջին 1907 տարին ալ աւելացնելով կողեմ, սրպէսզի Ընդհանուր ժողովոյ առջև ելլէ:

Նպաստից հաշիւներն յղած եմ արդէն ընդարձակ հաշուեցուցակով, և տեղեկագիրն ալ պիտի յղեմ ի մօտոյ, ինչպէս որ նամակիս մէջ ալ նշանակած էի:

Առձեռն դրամներու և աւանդներու և կտակներու, պատկանեալներն յղուած և յանձնուած են արդէն, ինչպէս արձանագրութեան պատճէնն ալ ստացաք: Ուրեմն հաշիւներու համար ըսելիք չի մնար, իսկ համարատուութեան համար Խառն ժողովոյ ուշադրութեան կ'յանձնեմ վերև գրած դիտողութիւններս:

Մնամ աղօթակից

Մաղափա Արեւայիսկոպոս

* *

ԲԵՐԱ Կ. ՊՈԼՍՈՅ, 20 ՍԵՊՏ. 1908

Բ. ԳԵՐ. Տ. ՆԿԻՇԷ Ս. ՆԱԿՍ. ԳՈՐԷԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԲՈՒՐԵԱՆԿ Կ. ՊՈԼՍՈՅ.

Լրագիրներ յօդուածներ ունին, որոնց մէջ շահերտով զատուած առջև կըբերեն՝ իբր իմ՝ Սեպտ. 10 թուակիր նամակէս առնուած խօսքեր: Չակերտի մէջ տողեր պաշտօնական հանգամանք կառնեն, իբր թէ բառ առ բառ իմ գրածներս ըլլան, և այդ հանգամանքն ալ չէին համարձակեր տալ, եթէ Պատրիարքարանէ կամ դիւանէ ընդունած չըլլային:

Արդ՝ այդ տողերը լիովոխուտած և խեղաթիւրուած են: Եւ որպէսզի միաքերը պղտորելու համար Պատրիարքարանն ալ գործակից չերևայ, պէտք է որ 1908 Սեպտ. 10 թուակիր նամակս նոյնութեամբ և ամբողջութեամբ հրատարակութեան տրուի, և Գիււանին ալ պատշաճ զգուշաւորութիւնն հրամայուի լրագիրներուն հաղորդած տեղեկութեանց մասին:

Մնամ աղօթակից

Մաղափա Արեւայիսկոպոս

— Պօլսի ազգային երեսփոխանական ժողովը ամսոյս 22-ի իւր նիստի մէջ միաձայն պատրիարք ընտրեց Սրբազան Մասրէոս արեւայ. Իզմիրեանի: Ժողովում շեշտուել է նաև իզ-

միրլեան Արքայանի կաթնուղիկսոսացման անհրաժեշտութիւնը:

— Վերջերս բուռն կերպով կատարում էին Պօլսի Ազգ. Երես. Ժողովի համար պատգամաւորները ընտրութիւնները: Ամսոյս սկզբներին աւարտուած լինելով այդ ընտրութիւնը, քացուել են Պօլսում Երես. Ժողովների նիստերը:

Ազգ. Երես. Ժողովի ղիւանը կազմուած է այսպէս. Ստե- նապետ—Մինաս Չերազ, Իոխ.—ատենապետաներ—Իսքու Վ. Թոր- գոմեան և Գէորգ էֆ. Ասլանեան. ատենագլխիներ—Րանդ Ասա- սուր, Հայկ Խոջասարեան և Հինգլեան:

Ազգային Երես. Ժողովի նախագահի համար քուէարկուել են՝ Գաբրիէլ Նորասունկեան (25 ձայն) և Մ. Չերազ (52 ձայն):

Իւր Գ-ըզ նիստի մէջ Ժողովը ընտրելով կաթնուղիկսոսական պատգամաւոր (Մարտիրոս էֆ. Թելլեան) Պօլսոյ թեմի կողմից իբրև աշխարհական ներկայացուցիչ, ապա անցել է Կրօնական և Քաղաքական Ժողովների անդամների ընտրութեան: Այս երկու ժողովների խառն մարմինը կազմում է ազգային վարչութիւն:

— Կ. Պօլսի Ազգ. Երես. Ժողովը իւր ամսոյս 17-ի նիստի մէջ քննութեան առնելով նախկին պատրիարք Օրմանեանի մատուցած հրաժարականը պաշտօնից, սրտշէլ է քննութեան չառ- նել այդ հրաժարականը, համարելով նախկին պատրիարքին պաշտօնանկ եղած ազգի կամբով:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Շեխպիրի բասրոնը.—Անգլիացիք վաղօրօք սկսել են Շեքս- պիրի յօրեւեանի համար պատրաստութիւն տեսնել, որ պիտի կատարուի 1916 թ.՝ նրա մահուան երեքհարիւրամեակին: Ար- դէն երեք տարի առաջ կազմուել է յանձնաժողով, որ առա- ջարկել է ժողովել 1256000 դուբլու գումար, կէսը յատկացնել արձան կանգնեցնելու, իսկ միւս կէսը՝ քաղաքակրթական նպա- տակները համար: Սակայն արձան կանգնեցնելու նախագիծը